

**ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԻ ԸՆԹԱՅԻԿ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ**

*(Մատենադարանի տնօրեն Հ. Թամրազյանի ամփոփիչ զեկուցումը
մեկ տարվա աշխատանքների եւ առաջիկա ծրագրերի մասին)*

Զեկուցումը նվիրված է Մատենադարանի շուրջ մեկ տարվա համալիր աշխատանքների արդյունքների ամփոփմանը, ընթացիկ խնդիրներին եւ զարգացման ծրագրերի առաջնահերթություններին:

Շուրջ մեկ տարի առաջ, Մատենադարանի զարգացման ծրագրերի մասին խոսելիս, հատուկ կանգ էինք առել գիտահետազոտական խնդիրների վրա՝ ընդգծելով բնականոն սերնդափոխության եւ նոր մասնագետների ներգրավման անհրաժեշտությունը, որ հայագիտության ամենացավոտ խնդիրներից է:

Մենք շեշտել էինք, որ անհրաժեշտ է վերականգնել Մատենադարանում ամենամյա գիտական նստաշրջանները, որոնք կարելու են հատկապես գիտնականների նոր սերունդների ձեւավորման համար, ինչպես նաեւ հրավիրել միջազգային գիտաժողովներ, որոնք հայագիտության զարգացման նոր հեռանկարներ են բացում:

Այժմ, ամփոփելով գիտական աշխատանքների արդյունքները նշված ժամանակահատվածում, փորձենք ներկայացնել մեր ձեռքբերումներն այս ասպարեզում:

Փորձենք ամփոփել առաջին հերթին գիտական աշխատանքներն ու արդյունքները. Մատենադարանի գիտական ներուժը անցած ժամանակահատվածում համարյա կրկնապատկվել է: Մատենադարան են մուտք գործել 30-ից ավելի երիտասարդ գիտաշխատողներ՝ գիտության թեկնածուներ, ասպիրանտներ, մագիստրատուրան գերազանց ավարտածներ, նույնիսկ մեկ ուսանող, որ Մաշտոցի անվան կրթաթոշակ է ստացել: Կարող ենք ասել, որ սրանով մասամբ լուծել ենք մեր հիմնական՝ բնականոն սերնդափոխության խնդիրը: Նրանց մի մասը համալրել է Մատենադարանի գիտական տարբեր խմբերը, իսկ հիմնական մասն ընդգրկվել է «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց» համապարփակ ծրագրի շրջանակներում, որն իր մեջ ներառում է հայերեն ձեռագրերի Մայր ցուցակի նկարագրության, սրբագրման, խմբագրման, անվանացանկերի կազմման, համակարգչային մուտքագրման, հրատարակության նախապատրաստման եւ տպագրության հարցերը: Այս գործընթացը, որ Մատենադարանի

գիտական աշխատանքների հիմքն է, գաղտնիք չէ, որ ընթանում էր ծայրահեղորեն դանդաղ, մեծ ընդմիջումներով եւ ընդհատումներով: Մենք իբրեւ հայագիտության զարգացման առաջնահերթություն ՀՀ կառավարությանը ներկայացրեցինք «Մայր ցուցակի» կազմման եւ հրատարակման 10-ամյա մի ծրագիր, որ ներառում է 11 130 ձեռագրի նկարագրության եւ 32 մեծադիր հատորներով հրատարակման ողջ ընթացքը: Ծրագիրը հավանության արժանացավ եւ ֆինանսավորվեց առանձին՝ բազային ֆինանսավորումից դուրս: Ասեմ, որ նախկին տեմպերով շարժվելու դեպքում այս աշխատանքները կավարտվեին լավագույն դեպքում կես դար հետո: Մենք ծրագրի մեջ ընդգրկել ենք 17 նոր գիտաշխատող, որոնք մեր հին եւ փորձառու աշխատակիցների հսկողության տակ աշխատում են բավական արդյունավետ: Առանց երկմտելու կարող ենք ասել, որ նոր մասնագետները, որոնք համալրել են Մատենադարանի երեք՝ ձեռագրերի նկարագրության, ձեռագրագիտության եւ գրչության կենտրոնների պատմության գիտական խմբերը, հրաշալի են անցել փորձաշրջանը եւ ահա արդյունքը՝ այս ընթացքում փաստորեն 7-8 ամսում, նկարագրված են 600-ից ավելի ձեռագրեր:

Նկարագրություններն արդեն ստուգված եւ խմբագրված են: Առավել արդյունավետ են ընթանում նաեւ մուտքագրման, խմբագրման, սրբագրման, անվանացանկերի կազմման աշխատանքները, որոնք կատարվում են բարեսիրիզ եւ գիտական պատշաճ մակարդակով:

Այժմ «Մայր ցուցակի» հրատարակչական աշխատանքների մասին:

Ինչպես գիտեք, հրատարակվել է «Մայր ցուցակի» երրորդ հատորը, չորրորդ հատորն արդեն գտնվում է տպարանում, արագորեն հրատարակության է պատրաստվում հինգերորդ հատորը: Նկարագրական աշխատանքներին զուգընթաց՝ մենք պետք է 10 տարվա ընթացքում ավարտին հասցնենք 32 հատորի հրատարակությունը: Առկա տեմպերով շարժվելով մենք ի զորու ենք այդ անել:

Բավարար հիմքերի վրա ենք փորձել դնել նաեւ օտարալեզու ձեռագրերի նկարագրությունները: Տարիներ ի վեր պարսկերեն ձեռագրերի նկարագրությանը զբաղվում է մեր գիտաշխատակից Քրիստինե Կոստիկյանը, աշխատանքները կավարտվեն 2009 թ., եւ ցուցակը, բնականաբար, կհրատարակվի: Արաբերեն ձեռագրերի նկարագրության համար մենք պայմանագրով աշխատանքի ենք ընդունել նոր մասնագետի, այս տարվա ընթացքում նախատեսվում է 500 ձեռագրի համառոտ նկարագրություն, որ մենք ընդգրկել ենք մեր հրատարակչական ծրագրերում: Ասեմ նաեւ, որ մասնագետներ ենք ընդունել նաեւ օսմաներեն, եբրայերեն ձեռագրերի նկարագրման եւ ուսումնասիրման համար:

Այս ընթացքում լույս է տեսել Մատենադարանի ձեռագրաց համառոտ ցուցակի երրորդ հատորը (կազմող՝ Ա. Մալխասյան):

Մատենադարանի կարեւոր գործառույթներից է ձեռագրերի վերականգնումը. մեր վերականգնման բաժինը՝ իր մասնագետներով եւ տեխնիկական հագեցվածությամբ, լավագույններից է, եթե ոչ լավագույնը, տարածաշրջանում: Այստեղ են կենտրոնանում նաեւ հայագիտական տարբեր կենտրոնների եւ արտերկրի պատվերներ, մեր մասնագետները արտասահմանյան գործուղումների են մեկնում, հրավիրում են միջազգային դասընթացներ՝ օտարերկրյա հայտնի մասնագետների մասնակցությամբ: Ընթացիկ ժամանակահատվածում ամբողջովին եւ մասնակիորեն վերականգնվել են շուրջ 50 ձեռագիր, 15 հնատիպ գիրք: Տեմպերի առումով, բնականաբար, սա անբավարար է, քանի որ անցած տարիների ընթացքում վերականգնված է ձեռագրական ֆոնդի փոքր մասը: Բաժնի ձեռքբերումներից ու հաջողություններից է արծաթյա կազմերի վերանորոգումը՝ գերմանացի գործընկերների համագործակցությամբ, որը տեսում է արդեն շուրջ մեկ տասնամյակ: Դրա արդյունքները, կփորձենք ամփոփել առանձին ուսումնասիրություն-ալբոմում: Բաժինն ունի ընդլայնման մեծ պոտենցիալ՝ թե՛ գիտական ներուժի թե՛ լաբորատոր պայմանների առումով, որ մենք ներառել ենք մեր ծրագրերի մեջ: Իբրեւ սկիզբ՝ մենք ՀՀ կառավարությանն ենք ներկայացրել ձեռագրերի՝ նոր տեխնոլոգիաներով ուսումնասիրման եւ վերականգնման ուղղությամբ երիտասարդ մասնագետներով համալրված գիտական խմբի եռամյա աշխատանքային մի ծրագիր, որ, հույսով ենք, հավանության կարժանանա Գիտության պետական կոմիտեի կողմից: Այս բնագավառում, իրոք, անելիքներն անսպառ են, եւ լուրջ ներդրումներ ու ներարկումներ են անհրաժեշտ:

Մատենադարանի կարեւորագույն գործառույթներից է ձեռագրական ֆոնդի համալրումը: Այս ընթացքում մենք ունեցել ենք կարեւոր ձեռքբերումներ. Մատենադարան են մուտք գործել 17 ձեռագրեր, որոնցից առավել արժեքավորներն են՝

Մեծոփա վանքի XIV դ. շքեղ Ավետարանը, բազմաթիվ հիշատակարաններով եւ մեծարժեք մանրանկարներով (գրիչ՝ Ստեփանոս, մանրանկարիչ՝ Ներսես Մաղկող): Այս ձեռագիրը բացառիկ է նաեւ իր պատմությամբ, որի մասին առիթ ենք ունեցել խոսել:

Շարահնոց՝ XVI դ., գրիչ եւ ծաղկող Մեսրոպ Խիզանցի: Մանրանկարներով հարուստ շքեղ ձեռագիր է:

Ավետարան, XVII դ., գրիչ եւ ծաղկող Բարաղամ: Նույնպես հարուստ է շքեղ մանրանկարներով:

Այս երեք ձեռագրերն իր ընկերների հետ գնել եւ Մատենադարանին է նվիրաբերել մոսկովաբնակ հայ բարերար Հրանտ Պողոսյանը:

Ճառքնտիր, XVII դ., նոր Զուղա, պատվիրատուն է Խոջա Մահտեսի Զաքարը, մեկը նշանավոր առեւտրական տոհմից, որը աղամանդե գահ է նվիրել Ռուսիո թագավորին: Մեծարժեք այս ձեռագրին երկար ենք սպասել: Այն Մատենադարանին է նվիրաբերել ամերիկահայ բարերար Եղիա Հովհաննիսյանը, որը մինչ այդ եւս երկու ձեռագիր էր նվիրաբերել Մատենադարանին: Այս գործի նախաձեռնողն է հանդիսացել մեր բարերար եւ հին բարեկամ Ավո Հովհաննիսյանը, որի նվիրատվությունները Մատենադարանին զարմանք եւ հիացմունք են շարժում՝ 17 ձեռագիր, 25 պատառիկ, 2100 միավոր արխիվային նյութեր, 300 հնատիպ գրքեր, 58 միավոր մամուլի նմուշներ: Նրա միջնորդությամբ՝ ի հավելումն այս ամենի, Մատենադարանին է նվիրվել եւս 62 ձեռագիր: Օգտվելով առիթից՝ եւս մի անգամ մեր երախտագիտությունն ենք հայտնում նրան եւ Մատենադարանի բոլոր բարերարներին:

Ավետարան, XIV դ., նվիրատուն է Հայաստանի «էլ-ցանցեր» կազմակերպությունը, որը երրորդ նվիրատվությունն է անում ընթացիկ տարում: Հարկ է շեշտել, որ անընդհատ համալրվում են նաեւ Մատենադարանի գրադարանային եւ արխիվային ֆոնդերը, ինչպես նաեւ մամուլի հավաքածուն:

Գրադարանային ֆոնդ են մուտք գործել 7 հնատիպ գրքեր, 550 հատոր հայերեն եւ օտարալեզու մեծարժեք գիտական գրականություն: Գրականության ձեռքբերման այս գործընթացը, արտասահմանյան ֆոնդերի ֆինանսավորման միջոցով, կարիք ունի հետագա բարելավման:

Գիտական աշխատանքների յուրատեսակ ստուգատես են եղել այս ընթացքում Մատենադարանի կազմակերպած երկու գիտաժողովները: Առաջինը Մատենադարանի XXX հոբելյանական գիտաժողովն էր, որը հանրագումարի բերելով վերջին տարիների աշխատանքները՝ նաեւ նոր հետազոտությունների եւ զարգացումների հնարավորություններ էր նշում: Հուրախություն մեզ, գիտաժողովն անցավ գիտական-ստեղծագործական մթնոլորտում, ծավալվեց կենդանի երկխոսություն, ներկայացվեց եւ ցուցադրվեց մեծ հետաքրքրություն եւ արժեք ներկայացնող մատենագրական-մանրանկարչական հարուստ նյութ: Բուն գիտաժողովն ինքը, կարծես, գիտական մի մեծ ծրագիր եւ զարգացումներ էր նախանշում, որում իրենց կարեւոր ներդրումն ունեցան Մատենադարանի երիտասարդ մասնագետները: Գիտաժողովի արդյունքները ամփոփված № են Մատենադարանի «Բանբերի» հատորում:

Երկրորդ միջազգային գիտաժողովը հրավիրվել էր Անթիլիասում Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա կաթողիկոսի հովանավորությամբ: Կաթողիկոսարանի հետ կազմակերպող կողմ էր հանդիսանում նաեւ Մաշտոցյան Մատենադարա-

նը: Գիտաժողովը նվիրված էր Կիլիկյան Հայաստանի մշակույթին եւ անցավ բացառիկ հաջողությամբ: Այն հաջողված փորձ էր ամբողջական հայացք ուրվագծելու Կիլիկյան Հայաստանի մշակույթի հանդեպ՝ իբրեւ ոչ միայն հայ միջնադարի, այլեւ արեւելաքրիստոնեական եւ համաքրիստոնեական մշակույթի ամենավառ եւ ինքնատիպ դրսեւորումներից մեկի: Մատենադարանը համաժողովին ներկայացավ բազմաթիվ զեկուցումներով, որոնք, ի թիվս այլոց, կամփոփվեն «Հասկ» հայագիտական հանդեսի առանձին հատորյակում:

Որոշվեց պարբերական դարձնել միջազգային այդ գիտաժողովը, առաջ քաշվեցին համագործակցության եւ համատեղ հրատարակությունների ծրագրեր:

Երրորդ միջազգային գիտաժողովը կգումարվի այս տարվա հոկտեմբեր ամսին: Այն նվիրված է մեծ գիտնական, Մաշտոցի անվան Մատենադարանի հիմնադիր-տնօրեն Լեւոն Խաչիկյանի ծննդյան 90-ամյակին: Սպասվում է գիտական-կազմակերպչական մեծ աշխատանք:

Այս առթիվ մենք հրատարակել ենք մեծանուն գիտնականի երկերի III հատորը: Նպատակ ունենք մեկ գրքի մեջ ամփոփել նաեւ արդեն լույս տեսած I եւ II հատորները, որոնց տպագրական որակը հեռու է բավարար լինելուց: Նախատեսում ենք նաեւ Լ. Խաչիկյանի մեծարժեք ուսումնասիրություններից մեկի՝ «Հայերը հին Մոսկվայում եւ Մոսկվա տանող ճանապարհների վրա» երկի ուսերեն հրատարակությունը: Բնականաբար, գիտաժողովի բոլոր նյութերն այնուհետեւ կմեկտեղվեն առանձին ժողովածուում:

Այժմ հրատարակված այլ գրքերի եւ ծրագրերի մասին: Վերջերս լույս տեսավ Մատենադարանի պարսկերեն վավերագրերի IV հատորը (աշխատասիրություն՝ Ք. Կոստիկյանի): «Նաիրի» հրատարակչության հետ համատեղ հրատարակված «Մատենադարանի մանրանկարչական գանձերը» գիրք-ալբոմը առաջին մրցանակ շահեց Մոսկվայի միջազգային ցուցահանդես-մրցույթում: Այս տարի կհրատարակվեն ալբոմի ուսերեն եւ անգլերեն տարբերակները: Ընդհանրապես, նախատեսում ենք հայ մանրանկարչական գանձերին նվիրված հրատարակությունների շարք՝ նվիրված առանձին մանրանկարիչների, ձեռագրերի թեմատիկ եւ ծավալային տարբեր ընդգրկումներով: Աշխատանքներ են տարվում Մատենադարանի ձեռագրերի արձայնա կազմերի հայերեն-գերմաներեն ուսումնասիրություն-ալբոմը հրատարակության նախապատրաստելու համար:

Նախատեսում ենք նաեւ գիտական մենագրությունների հրատարակման շարք:

Այս հրատարակությունների հիմնական մասը կատարվում է Գալուստ Գյուլբենկյան հաստատության հովանավորությամբ, որի համար մեր երախտա-

գիտությունն ենք հայտնում հաստատության հայկական բաժանմունքի տնօրեն, մեր հին բարեկամ, դոկտոր Զավեն Եկավյանին:

Կիլիկիո Հայոց կաթողիկոսարանի, Մաշտոցյան Մատենադարանի, ԵՊՀ հրատարակչության եւ հայագիտական այլ կազմակերպությունների համագործակցության արդյունքում է լույս ընծայվում նշված բարեգործական հաստատության հիմնադրած «Մատենագիրք Հայոց» համընդգրկուն մատենաշարը, որի վերջին հատորները կազմվել եւ կազմվում են հիմնականում Մատենադարանի ուժերով: Այս ընթացքում լույս է տեսել մատենաշարի IX դ. ընդգրկող հատորը (կազմող՝ Հակոբ Քյոսեյան): Այս ամենը վկայությունն է Մատենադարանի բավական լարված եւ հետաքրքիր գիտական տարու, որը սրանով չի սահմանափակվում: Նկատի ունեմ մատենադարանցիների մասնակցությունը հայաստանյան եւ արտերկրյա այլ միջազգային գիտաժողովներին, Ֆրանսիայում Հայաստանի տարվան նվիրված գիտական-մշակութային միջոցառումներին, Շվեյցարիայի Ժնև քաղաքի Բողմեր հիմնադրամի թանգարանում կազմակերպված Մատենադարանի մանրանկարչական գանձերի ցուցադրությունը, նրանց գիտական հոդվածների լույսընծայմանը բազմաթիվ կատալոգներում, հեղինակած եւ հեղինակակցությամբ լույս տեսած գրքերն ու մենագրությունները արտերկրի գիտական հայտնի հրատարակչություններում: Այս արդյունքները մենք տարեվերջին ամփոփելու ժամանակ դեռ կունենանք: Արդեն լույսընծայման ընթացքի մեջ են «Գանձարանի» երկու հատորները, որոնց կազմողն է Վարդան Գեւրգյանը, Գրիգոր Նարեկացու մատենագրության հատորը, կազմման ընթացքի մեջ է Նարեկյան դպրոցին նվիրված հատորը:

Մատենադարանի համար կարեւոր է նաեւ ցուցադրման հնարավորությունների, ներքին տարածքների առավելագույնս օգտագործման խնդիրը: Զբոսաշրջիկների հոսքն արդեն այս տարի զգալիորեն աճել է: Ցուցասրահի աշխատակիցներն աշխատում են բարեխիղճ եւ հաճախ գերլարված: Այդ նպատակով մենք փորձում ենք լավագույնս օգտագործել երկրորդ ցուցասրահը եւ երկու ցուցասրահներն իրար կապող նախասրահը, որպեսզի ամբողջ տարածքն ընկալվի իբրեւ ցուցադրական մի ամբողջություն: Կարծում եմ, պետք է գովազդային նյութերով եւ պատկերաշարերով հարստացնել նաեւ Մատենադարանի ներքին տարածքները: Այդ գործին ի սպաս ենք դնելու հայ բարերար Գաբրիել Չեմպերճյանի նվիրած հատուկ տպագրական սարքավորումը:

Մատենադարանի հիմնականում երկրորդ ցուցասրահում, նախասրահում եւ գլխավոր սրահում նշված ժամանակահատվածում մենք կազմակերպել ենք բացառիկ ցուցադրությունների մի ամբողջ շարք, որ զգալիորեն փոխել է ցուցադրության գինամիկան եւ հագեցվածությունը, մեծացրել նյութի մատուցման հնարավորությունները, ներքին տարածքները:

Այդ ցուցադրությունների շարքում ընդգծվում են հետեւյալները՝
Թարգմանչաց տոնին նվիրված ցուցադրությունը (I սրահ),
«Հայաստանը միջնադարյան քարտեզագրության մեջ» (նախասրահ),
Չորս ձիավորների Ավետարանի ցուցադրությունը (II սրահ),
Վերանորոգված արծաթյա կազմերով ձեռագրերի,
Եղեգիսի եւ Մելիդենեի Ավետարանների ցուցադրությունները (II սրահ),
Առաքել Գեղամեցուն (XVI) դ. մանրանկարների, ինչպես նաեւ տարբեր
բարերարների կողմից նվիրաբերված ձեռագրերին նվիրված առանձին ցուցա-
դրությունները:

Այս ընթացքում օգտագործվել են գովազդային նյութեր, պաստառներ,
ազդագրեր եւ պլակատներ:

Այժմ երկրորդ ցուցասրահում կազմակերպվել է Վասպուրականի ման-
րանկարչությանը նվիրված մի բացառիկ ցուցադրություն:

Մինչեւ տարեմուտ նախատեսվում են Ղրիմի, Կիլիկիայի մանրանկարչու-
թյանը, ինչպես նաեւ Վազգեն Վեհափառի նվիրաբերած ձեռագրերին նվիրված
բացառիկ ցուցադրություններ: Այս ընթացքում փորձում ենք հնարավորության
սահմաններում հարստացնել ներքին հարդարանքը, ապահովել անհրաժեշտ
օդափոխություն եւ լուսավորություն, ձեռք բերել նոր, առավել ժամանակակից
ցուցապահարաններ:

Մաշտոցի անվան Մատենադարանի զարգացման ծրագրերի կարեւոր
բաղկացուցիչներից է ձեռագրերի թվայնացումը: Վերջին ամիսների ընթաց-
քում Մատենադարանը ստացել է տեղական եւ արտերկրյա կազմակերպու-
թյուններից այդ ոլորտին առնչվող համագործակցության առաջարկներ:

Տեղական կազմակերպությունների թվում են՝

ա. «Ավիոինֆոթեկ» ՓԲԼ-ն,

բ. «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամը,

Արտերկրի կազմակերպություններն են՝

ա. «Վեստիգիա» ձեռագրերի հետազոտման կենտրոնը (Գրաց,
Ավստրիա),

բ. «Հին ձեռագրերի էլեկտրոնային գրադարան» կազմակերպությունը
(ԱՄՆ):

Այս առաջարկների քննարկման եւ բանակցությունների ընթացքում
մշակվել են սկզբունքներ, ձեռք են բերվել պայմանավորվածություններ,
կնքվել են համաձայնագրեր:

Բոլոր այս սկզբունքների հիմքում եղել է մի կարեւոր նախապայման՝ այն
է բացառել Մատենադարանի ձեռագրական ֆոնդի թվայնացված պատկերնե-

րի փոխանցում որեւէ այլ կազմակերպության՝ դրանց տնօրինման բացառիկ իրավունքը վերապահելով Մատենադարանին:

Նշված տեղական եւ արտերկրյա այդ կազմակերպությունները միջազգային վարկանիշ եւ հեղինակություն են վայելում եւ մեծ փորձառություն ունեն նորագույն տեխնոլոգիաների ներդրման եւ կիրառության ոլորտում:

«Ավիոինֆոտել»-ը այս ասպարեզում Մատենադարանի հիմնական գործընկերն է,

Մաշտոցի անվան հին ձեռագրերի ուսումնասիրման ինստիտուտ Մատենադարանը եւ «Ավիաինֆոտել» կազմակերպությունը սույն թվականի մարտին համաձայնագիր են ստորագրել համագործակցության մասին՝ համատեղ ծրագրեր մշակելու եւ իրականացնելու ուղղությամբ: Համաձայնագիրը նախապես փորձաքննության է ենթարկվել եւ հավանության արժանացել ՀՀ կառավարության համապատասխան օղակներում:

«Ավիոինֆոտել» կազմակերպությունը նոր տեխնոլոգիաների՝ հատկապես տվյալների շտեմարանային ծրագրերի մշակման եւ ներդրման առաջատարներից է թե՛ Հայաստանի Հանրապետությունում եւ թե՛ արտերկրում: Կազմակերպության մշակած եւ ներդրած մի շարք նմանօրինակ ծրագրեր բարձր արդյունավետություն են դրսևորում շնորհիվ ծրագրային նոր փաթեթների, որոնք հնարավորություն են տալիս համացանցում առավելագույն որակով ներկայացնել մեծ ծավալ ունեցող տեղեկատվական հոսքերը, մի բան, որ միշտ էլ խնդիրներ է հարուցել օգտվողների շրջանում:

Ըստ կնքված համաձայնագրի՝ «Ավիոինֆոտելը» բարեգործական հիմունքներով Մատենադարանին է տրամադրում իր մշակած ծրագրային փաթեթները, պարտավորվում է Մատենադարանի ներկայացրած չափորոշիչների հիման վրա մշակել ազգային արժեքների թվայնացրած պատկերները եւ ներդնելու դրանց առնչվող գիտական տեղեկատվությունը համակարգելու եւ դասակարգելու շտեմարանային ծրագիր, որը առավելագույնս կդյուրացնի Մատենադարանի գիտահետազոտական աշխատանքները բոլոր ուղղություններով: Բացի այդ, «Ավիոինֆոտելը» Մատենադարանին անհատույց տրամադրելու է նոր սարքավորումներ՝ թվայնացման աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու համար, նորացնելու եւ ընդլայնելու է Մատենադարանում առկա համակարգչային ներքին ցանցը, ինչպես նաեւ ապահովելու է Մատենադարանին ինտերնետային որակյալ կապով:

Արդեն իսկ «Ավիոինֆոտելը» մշակել եւ Մատենադարանի ինտերնետային կայքում տեղադրել է «Վիրտուալ Մատենադարան» եւ «Պատկերասրահ» էջերը, որոնք հնարավորություն են տալիս համացանցի միջոցով այցելել Մատենադարան, շրջել նրա սրահներով, դիտել մի շարք ցուցանմուշներ:

Վիրտուալ այցելության, ինչպես նաև ցուցանմուշների ներկայացման որակը համապատասխանում է ամենաբարձր ստանդարտներին: Կայքում տեղադրված են նաև եվրոպայի եւ Փոքր Ասիայի բազմաշերտ թվային պատմական քարտեզները, ինչպես նաև հայ գրչության կենտրոնների բազմաշերտ թվային քարտեզները: Սրա հետ մեկտեղ «Ավիոինֆոտելի» մշակած ծրագիրը հնարավորություն չի տալիս պատճենել համացանցում տեղադրված պատկերները, ինչը կարեւոր է այդ պատկերների նկատմամբ հեղինակային իրավունքի տեսակետից: «Պատկերասրահ» էջը օգտվողներին պարբերաբար ներկայացնելու է Մատենադարանի գանձերը, նոր ձեռքբերումները, ժամանակավոր ցուցադրությունների ցուցանմուշները: Մոտ ապագայում Մատենադարանի կայքում կբացվի նաև «Մայր ցուցակ» էջը, որտեղ տեղադրվելու են Մատենադարանում պահվող ձեռագրերի ընդարձակ նկարագրությունները: «Ավիոինֆոտելը» ոչ միայն տրամադրում է իր մշակած շտեմարանային ծրագրերը, այլև Մատենադարանի գիտաաշխատողներին ուսուցման հատուկ դասընթացներով հմտացնում է դրանցից օգտվելու եւ ինքնուրույն աշխատելու մեջ:

Այսպիսով Մատենադարանի եւ «Ավիոինֆոտելի» համագործակցությունը նպատակ ունի բարձր տեխնոլոգիաների միջոցներով ազգային արժեքները աշխարհին ներկայացնել, կարելիություններ ստեղծել գիտահետազոտական աշխատանքների դյուրացման եւ արդյունավետության բարձրացման համար: Մյուս կարեւոր արդյունքը ազգային արժեքների պահպանության եւ անվտանգության ապահովման արդիական եղանակների յուրացումն ու կիրառությունն է Մատենադարանի ձեռագրերի թվային պատկերների շտեմարան ստեղծելու միջոցով: Սա միանգամայն նոր մի բնագավառ է Մատենադարանի համար եւ մի առանձին գիտական-ստեղծագործական խմբի կազմավորում է ենթադրում: Նախատեսվում է նաև «Վիրտուալ Մատենադարան» ծրագիրը մտցնելու համահայաստանյան կրթական համացանցի մեջ: Շեշտենք, որ սարքավորումները «Ավիոինֆոտելից» Մատենադարանին են փոխանցվում վերջինիս սեփականության իրավունքով:

«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի հետ Մատենադարանի համագործակցությունը ենթադրում է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտին առնչվող հարցերում Մատենադարանին համակողմանի աջակցություն խորհրդատվության եւ տեղեկատվության տրամադրման, ծրագրերի նախապատրաստման եւ փորձաքննության իրականացման միջոցով:

Արտերկրյա կազմակերպությունների հետ Մատենադարանի համագործակցության ծրագրերը իրագործվում են նրանց կողմից նվիրատվությունների եւ դրամաշնորհների տրամադրման միջոցով, որը հնարավորություն կտա նոր աշխատատեղեր բացել Մատենադարանում:

Լեւոն Գուլումճյանի բացառիկ նվիրատվության մասին հայտնի է բոլորիդ: Հուսով ենք, որ շուտով կստանանք թվայնացնող սարքերի նոր համալրում մեր բարեկամ Գաբրիել Չեմպերճյանի կողմից:

«Վեստիգիա» կենտրոնի հետ համագործակցության ծրագրով Մատենադարանին անվարձահատուց տրամադրել է միջազգային փորձաքննություն անցած թվային ֆորմատով լուսանկարող սարք՝ մոտ 400 ձեռագիր թվային ֆորմատով լուսանկարելու համար: Կենտրոնի ֆինանսավորմամբ Մատենադարանում բացվել է 3 աշխատատեղ:

Այս աշխատանքների մեջ ընդգրկված է նաեւ Մատենադարանի ֆոտոլաբորատորիան: Արդեն թվայնացվել են Մատենադարանի մոտ 300 ձեռագրեր: Սա մի նոր, աշխատատար ճյուղ է Մատենադարանում եւ կարիք ունի նոր ձեռքբերումների եւ ներդրումների: Նախատեսվում է ձեռագրերի նկարագրության եւ հրատարակության հետ համընթաց՝ 10 տարում ավարտել նաեւ ձեռագրերի թվայնացման եւ համացանցում տեղադրման աշխատանքները:

«Հին ձեռագրերի էլեկտրոնային գրադարանի» հետ ձեռք բերված նախնական պայմանավորվածությունների շրջանակներում են Մատենադարանի կրկնագիր ձեռագրերի վերծանման եւ ուսումնասիրման խնդիրները:

Այժմ Մատենադարանի տնտեսության մասին: Այս ընթացքում մշակվել եւ ՀՀ կառավարության քննարկմանն ենք ներկայացրել Մատենադարանի ենթակառուցվածքների պահպանման, վերականգնման եւ արդիականացման ծրագիր, որը, հուսով ենք, համալիր լուծում կստանա:

Մի խնդիր մասին եւս:

Վերջապես ՀՀ կառավարությունը հաստատեց Մատենադարանի կանոնադրության լրամշակված տարբերակը, որ հստակ կանոնակարգում է մեր ներքին խնդիրները, տարբերակում է կառավարման խորհրդի եւ գիտական խորհրդի գործառույթները, բյուջետային հատկացումների եւ արտաբյուջետային միջոցների նպատակային օգտագործման ուղիները, մասնավորապես, այդ միջոցներն այսուհետ շինմոնտաժային աշխատանքներից զատ, ինչպես նշված էր նախորդ տարբերակում, նախատեսվում է օգտագործել խորհրդի որոշմամբ ստեղծվող սոցիալական, խրախուսման, զարգացման, ձեռագրական եւ այլ նյութական արժեքների ձեռքբերման ֆոնդերի համար:

Բայց ամենակարեւորն այն է, որ Մատենադարանը նոր կանոնադրությամբ ստանում է գիտական աստիճաններ շնորհող խորհուրդ ձեւավորելու, ինչպես նաեւ ուսումնական կենտրոն ստեղծելու հնարավորություն, որ նոր հեռանկարներ է բացում Մատենադարանի համար: Ցանկանում եմ շեշտել, որ բոլոր մեր նախաձեռնություններում մեզ մեծապես աջակցել է ՀՀ ԳԿ նախարար-

րուծյունը՝ նախկին նախարար Լեւոն Մկրտչյանի ղեկավարությամբ, եւ մենք մեր հատուկ երախտագիտությունն ենք հայտնում այդ կապակցությամբ:

Ասեմ, որ մեր մտահոգությունների կենտրոնում է մատենադարանցիների կենսապայմանների, հատկապես աշխատավարձերի բարձրացման հարցը: Մենք դրան ենք ուղղում մեր արտաբյուջետային միջոցների գերակշիռ մասը, բայց դա անբավարար է: Այս հարցը պետք է փորձենք լուծել ներկայացվելիք նոր բյուջեի նախագծի հաստատման միջոցով: Հուսով ենք, որ այս կարեւոր հարցում ՀՀ կառավարությունը կընդառնա մեզ:

Այժմ ամենակարեւորի մասին.

Մատենադարանի զարգացման բոլոր ծրագրերի հիմքում Մատենադարանի գիտական նոր մասնաշենքի կառուցման խնդիրն է, որը գտնվում է ՀՀ բարձրագույն իշխանությունների, առավելապես ՀՀ նախագահի ուշադրության կենտրոնում:

Ընթացիկ ամիսների ընթացքում կառուցվելիք շենքի գլխավոր ճարտարապետին եւ աշխատանքային խմբին ներկայացվել են նախագծային հանձնարարականներ, համաձայնեցված Մատենադարանի բոլոր բաժինների ղեկավարների հետ: Նախագծի էսքիզները, ինչպես հիշում եք, ներկայացվել եւ քննարկվել են Մատենադարանի աշխատակազմի հետ, ՀՀ նախագահի մասնակցությամբ եւ արժանացել հավանության: Մեր բոլոր հեռանկարային ծրագրերը բխում են նրանից, քանի որ կապված են լաբորատոր նոր համակարգերի տեղադրման ու տեղակայման, նորագույն տեխնոլոգիաների ներդրման, ձեռագրապահոցների, տարեցտարի մեծացող արխիվային ֆոնդերի պահպանման պայմանների էական բարելավման, դրանցում օդափոխության (միկրոկլիմայի) պահպանության ժամանակակից համակարգերի ներդրման հետ: Ընդլայնման խիստ կարիք ունեն նաեւ գրադարանային ֆոնդերի գրապահոցները: Նոր մասնաշենքի կառուցումը խթան կհանդիսանա նաեւ Մատենադարանի գիտական գործունեության ծավալման համար. նրանում նախատեսվում է ստեղծել աշխատասենյակներ, գիտաժողովների եւ գիտամեթոդական դասընթացների համար նախատեսված դահլիճներ եւ սրահներ, ինչպես նաեւ լսարանների միասնական համակարգ: Այս ամենը հնարավորություն կտա առնվազն եռապատկել Մատենադարանի գիտական անձնակազմը, էպպես բարելավել գիտական գործունեության արդյունավետությունը, ինչպես նաեւ Մատենադարանի հիմնական կառույցի ցուցադրական հնարավորությունները՝ համապատասխանեցնելով դրանք ժամանակակից միջազգային բարձր չափանիշներին: Միայն այս դեպքում հնարավորություն կստեղծվի իրագործել Մատենադարանի՝ որպես հայագիտական խոշորագույն կենտրոնի զարգաց-

ման ծրագրերը՝ որակական նոր մակարդակի բարձրացնելով հայագիտությունն ընդհանրապես:

Նոր գիտական մասնաշենքում նախատեսվում են արդիական պահպանական համակարգերով ապահովված ձեռագրատան պահոցներ՝ շուրջ մեկ միլիոն միավոր գրականության համար, երեք ընթերցասրահներ, երկու մեծ եւ փոքր դահլիճներ՝ գիտաժողովների եւ սեմինարների համար, աշխատասենյակներ՝ 150 գիտաշխատողների համար, վերականգնման ընդարձակ լաբորատորիա՝ շուրջ 30 վերականգնող մասնագետների համար, ֆոտոլաբորատորիա, թվայնացման եւ համակարգչային ծրագրավորման բաժինների, հրատարակչական, տպագրական ծառայությունների, ուսումնամեթոդական ծրագրերի իրագործման եւ ստեղծագործող այլ խմբերի համար նախատեսվող տարածքներ: Նախատեսվում են նաեւ արվեստանոցներ, լսարաններ, ցուցասրահներ, ուր նորագույն տեխնոլոգիաներով, տեսաշարերով եւ ցուցապաստառներով կներկայացվեն Մատենադարանի գանձերը:

Իսկ հին շենքը, որ Երեւան քաղաքի համար պատմաճարտարապետական մի եզակի կոթող է, այսօր իր ամբողջական կառույցով, մուտքով, հինգ հարկերով եւ բազմաթիվ ցուցասրահներով կծառայի իբրեւ թանգարանային համալիր՝ մեծապես նպաստելով հայ մշակույթի քարոզչության գործին եւ զբոսաշրջության զարգացմանը:

Ճարտարապետների խումբն ինտենսիվ աշխատում է նախագծի վրա, աշխատանքները մտել են նոր հուն եւ, հուսով ենք, շուտով կմեկնարկեն շինարարական աշխատանքները՝ զարգացման նոր, աննախագեղ հեռանկարներ բացելով Մատենադարանի առջեւ: